# ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆՈՐ ԶԵԿՈՒՅՑ

## «Ոչ վարակիչ հիվանդություններին հակազդումը COVID-19 համավարակի ժամանակ և դրանից հետո»

Զեկույցը նախատեսված է կառավարությունների, քաղաքականություն մշակողների, ՄԱԿ-ի գործակալությունների և կարգացման ոլորտի գործընկերների համար, որոնք պայքարում են COVID-19 համավարակի ու ոչ վարակիչ հիվանդությունների (ՈՎՀ) դեմ:

**Զեկույցում շեշտվում են ՈՎՀ-ների դեմ պայքարի վճռական գործողությունները, որոնք պետք է լինեն COVID-19 համավարակին հակազդման, համավարակից հետո վերականգնման միջոցառումների բաղկացուցիչ մաս և առաջարկվում են քայլեր, որոնք պետք է ձեռնարկվեն անհապաղ և ավելի երկարաժամկետ հեռանկարի համար:**



# ՀԵՐԹԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱԱԻ-ի Հանրապետական գիտաբժշկական գրադարանում տեղի ունեցավ ՀՕՖ-ի Մարզային բժիշկների վերապատրաստման ծրագրի շրջանակներում բժիշկների հերթական խմբի տեղեկատվական գրագիտություն թեմայով դասընթացը:

# ԴԱՍԸՆԹԱՑ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակակդման կարողությունների հզորացում ծրագրի շրջանակում Առողջապահության ազգային ինստիտուտում կազմակերպվեց **«ՄԻԱՎ-ի վերաբերյալ խորհրդատվություն և հետազոտություն»** թեմայով 4-օրյա առցանց դասընթաց:

**Դասընթացի ավարտին մասնակիցներին տրամադրվեցին 10 ՇՄԶ կրեդիտներ:**

Դասընթացը նախատեսված էր ԱԱՊ հաստատությունների ընտանեկան բժիշկների, թերապևտների, վարակաբանների և լաբորատոր մասնագետների համար:

# ՊԱՏՎԱՍՏՎԻՐ ԵՎ ՀԱՂԹԻՐ COVID-19

## ՆԵՐԿՐՎԵԼ Է ASTRAZENECA ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԻ ՆՈՐ ԽՄԲԱՔԱՆԱԿ




**COVID-19-ի դեմ պայքարի շրջանակներում ներկրվել է պատվաստանյութի երկրորդ խմբաքանակը՝ 50 հազար դեղաչափ:**

**Եգոր Զայցև**
ԱՀԿ-ի հայաստանյան ներկայացուցիչ

«ԱՀԿ-ի գերակայություններից է՝ ապահովել COVID-19-ի դեմ պատվաստանյութերի որակը, անվտանգությունն ու արդյունավետությունը: Եվրոպական միության հետ համատեղ իրականացվող ծրագրի շրջանակում մենք պատրաստ ենք աջակցել երկրին՝ վերանայելու, մշակելու և ադապտացնելու պատվաստման ռազմավարությունները՝ նախատեսված Առողջության առաջնային պահպանման օղակի մասնագետների համար:

Նաև նախատեսվում է ստեղծել տարածաշրջանային կենտրոններ՝ նպատակ ունենալով ներգրավված բուժանձնակազմի համար նախաձեռնել կրթական սեմինարներ՝ աջակցելու համար Հայաստանում Իմունականխարգելման ազգային ծրագրին»:

ՀԱՂԹԵՆՔ ՀԱՄԱՎԱՐԱԿԸ ՄԻԱՍԻՆ

# COVID-19-ԻՑ ՀԻՎԱՆԴԱՑՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԸ ՆՎԱԶԵԼ ԵՆ 80%-ՈՎ

**Ըստ Reuters-ի հրապարակած հետազոտության տվյալների՝ Pfizer, Moderna, AstraZeneca պատվաստանյութերի առաջին դեղաչափով պատվաստում կատարելուց հինգ շաբաթ անց COVID-19-ի հիվանդացության դեպքերը նվազել են 80% -ով:**

Հետազոտությունները կատարվել են Իտալիայում, որը Եվրամիության անդամ առաջին երկիրն է, որտեղ կատարված ուսումնասիրությունը նպատակ ունի ցույց տալ պատվաստումների իմունականխարգելմանն ուղղված իրական ազդեցությունը: Ուսումնասիրությունն իրականացվել է Իտալիայի Առողջապահության ազգային ինստիտուտի (ISS) և Իտալիայի առողջապահության նախարարության կողմից:

**Ուսումնասիրվել է 2020 թ-ի դեկտեմբերի 27-ից մինչև 2021 թ-ի մայիսի 3-ը ընկած ժամանակահատվածը:**

**Ընդգրկվել է 13,7 միլիոն պատվաստված մարդկանց շրջանը:**

Մայիսի 15-ի դրությամբ, ըստ տվյալների, առաջին դեղաչափը ստանալուց 35 օր անց գրանցվել է **վարակման 80%**, **հոսպիտալացման 90%** և **մահացության 95%** ցուցանիշների նվազում:

**ՄՈՏ 8,3 ՄԼՆ ԻՏԱԼԱՑԻ (ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ 14% -Ը) ԱՐԴԵՆ ԼՐԻՎ ՊԱՏՎԱՍՏՎԵԼ Է, ԻՍԿ ՇՈՒՐՋ 10 ՄԼՆ ՄԱՐԴ ՍՏԱՑԵԼ Է ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԴԵՂԱՉԱՓԸ**

ԱԱԻ Առողջապահության ԼՐԱՏՈՒ

# COVID-19

## ՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

**221948**
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԴԵՊՔ

**1060108**
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՆՑԿԱՑՎԱԾ ԹԵՍՏ

**21057**
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՌՈՂՋԱՑԱԾ ԱՆՁ

**4392**
ՄԱՀԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹԻՎԸ

### Մայիսի 23-ի դրությամբ

**2963** ԱՆՑԿԱՑՎԱԾ ԹԵՍՏ

**68** ՆՈՐ ԴԵՊՔ

**222** ԱՌՈՂՋԱՑԱԾ ԱՆՁ

**5425** ԲՈՒԺՎՈՂ ՊԱՑԻԵՆՏ

**6** ՄԱՀՎԱՆ ԴԵՊՔ

ՕՊԵՐԱՏԻՎ ՋԱՆԳԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ **060 83 83 00** 24/7

ԱԱԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Լրատվական գործունեությունն իրականացնում է **«Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան Առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ**:Վկայական թիվ 01Ա 016493, տրված 07.09.1995թ.:
**Հղումը «Առողջապահության Լրատու»-ին պարտադիր է:**
Մեր հասցեն է՝ 0051, Երևան,Կոմիտասի պողոտա 49/4 Հեռ.՝+374 10 23 90 38

Հասարակայնության հետ կապերի բաժնի ղեկավար **Լուսինե Հովհաննիսյան**
Խմբագիրներ՝ **Մարո Գաբրիելյան**, **Նարինե Ավետիսյան**
Համակարգչային ձևավորումը՝ **Անդրեյ Աստվածատրյանի**